Որպէս օրինակ կը բերեմ նոյն շարականը՝ «Անձինք Նուիրեալք»ը, որպէսզի ընթերցողը ունենայ յստակ պատկերը իր աչքին առջեւ եւ տեսնէ թէ ինչպէս այնքան անգին ու քանկագին մեր հոգեմտաւոր հարստութիւնը, սրբազան երաժշտութիւնը դարերու խորերէն հասեր է մեզի, եւ մենք ալ մեր կարգին, կը փոխանցենք զայն մեր յաջորդներուն: Ուրեմն, «Անձինք Նուիրեալք»ը Լիմոնճեան ձայնագրութենէն Եւրոպական հնգաստող ձայնագրութեան կը փոխադրեմ «պարոյկ» = C յարաբերութեամբ.

Տես էջ 80, Նկար 9՝ Անձինք Նուիրեալք

Հայ Եկեղեցւոյ մէջ բազմաձայնութեան դրութիւնը սկսաւ 19-րդ դարուն:

Բազմաձայնային դրութեան ընկալումով եկեղեցիները հետզհետէ սկսան օժտուիլ երգեհոններով ու արտօնուեցաւ իգական սեռին մասնակցութիւնը եկեղեցական երգեցողութեանց, յատկապէս պատարագներու համար կազմուած դպրաց խումբերու: (Խօսքը չի վերաբերիր այն միանձնուհիներուն կամ կուսակրօն-քոյրերուն, որոնք մինչեւ սարկաւագի աստիճանի ընդունմամբ որպէս այդպիսին կը մասնակցին Եկեղեցւոյ արարողութեանց. այլ՝ խօսքը պարզ ժողովուրդի կիներուն մասին էր, որոնց արգիլուած էր եկեղեցական արարողութեանց ու երգեցողութեանց մասնակցիլ. արդէն իսկ այս մասին վերը տեսանք:

Իսկ, այդ ալ կատարուած էր հիմնուելով Ս. Գրային ուսուցումներէն Պօղոս Առաքեալի Կորնթոսի քրիստոնեայ համայնքին գրած նամակին հետեւեալ հրահանգին վրայ, Գլուխ 14, համար 34.- «Բոլոր եկեղեցիներու մէջ կիները լուռ պէտք է մնան, որովհետեւ անոնց հրամայուած չէ խօսիլ, այլ՝ հնազանդ ըլլալ, ինչպէս [Աստուծոյ] օրէնքը կ'ըսէ:» (Թուղթ Առ Կորնթացիս Ա.):

Առաջին Հայ երգեհոնահարը եղած է Անդրէաս Քաղցածեան (1809-1856), Կաթողիկէ Եկեղեցւոյ անդամ: Իսկ, Հայց. Եկեղեցւոյ մէջ, ժամապաշտութեանց ընթացքին երգեհոնի գործածութիւնը պաշտօնապէս թոյլատրուեցաւ Նոյեմբեր 9, 1923-ին, Գէորգ Ե. Տփղիսեցի Ամենայն Հայոց Հայրապետին (1847-1930) թիւ 350 Կոնդակովը:[28]

Առաջին բազմաձայն պատարագը հրատարակուեցաւ Վենետիկի Ս. Ղազարու վանքին մէջ 1877-ին, Իտալացի Երաժշտահան Pietro Bianchini-ի մշակումով Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ համար:[29] Այս գործը չընդհանրացաւ, ընդունելութիւն չգտաւ նոյնիսկ Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ մէջ:

Քրիստափոր Կարա-Մուրզա (1843-1902), որ Հայ երաժշտական մշակոյթի պատմութեան մէջ ճանչցուած է որպէս Հայ բազմաձայնային դպրոցին հիմնադիրը, Հայց. Եկեղեցւոյ համար իր մշակած բազմաձայն պատարագը, 1886-ին առաջին անգամ կատարելէ վերջ Պաքուի Ս. Գէորգ եկեղեցւոյ մէջ ու ապա այլուր, սկսաւ կիրարկել զայն նաեւ Էջմիածնի Մայր Տաճարին մէջ իր երաժշտապետութեան պաշտօնը վարած շրջանին՝ Սեպտեմբեր 1892-էն Հոկտեմբեր 1893: Սեներգիչներէն երկուքը եղած էին Սողոմոն Սարկաւագ Սողոմոնեան (ապա՝ Կոմիտաս Վարդապետ) եւ Ճեմարանական Արմենակ Շահմուրատեան (ապա հռչակուած՝ Հայաստանի Սոխակը):

Սակայն, դարաւոր աւանդ ունեցող միաձայնային երգեցողութեան փոխարէն քառաձայնով Հայ Եկեղեցւոյ պատարագի երգեցողութեան կատարումը, մանաւանդ Ս. Էջմիածնայ Մայր Տաճարին մէջ, Հայց. Եկեղեցւոյ երաժշտութեան պատմութեան մէջ մեծ յեղաշրջում էր, դէպի լուսաւորութիւն տանող հսկայ եւ յանդուգն քայլ էր եւ գնահատուած՝ լուսաւորեալ վանահայրերու եւ ժողովուրդին կողմէ, վերջիններս Երեւանէն յատկապէս Էջմիածին կ'երթային Կարա-Մուրզային քառաձայն պատարագը լսելու:

Ինչպէս յաճախ պատահած է եւ կը պատահի, նորարարները ընդիմութեան կը հանդիպին, նոյնը պատահեցաւ Կարա-Մուրզային:

Դժբախտաբար պահպանողական վանահայրերուն կողմէ Կարա-Մուրզային կատարածը գայթակղեցուցիչ արարք նկատուելով զինք ուսուցչութեան ու երաժշտապետութեան պաշտօններէն արձակելով դուրս դրին վանքէն:

Կարա-Մուրզա «քաւութեան նոխազ» դառնալով, սուղ գին վճարելով ճանապարհ հարթեց Կոմիտաս Վարդապետի, (որ Կարա-Մուրզայի մեկնումէն անմիջապէս ետք իրեն յանձնուեցաւ ուսուցչութեան ու երաժշտապետութեան պաշտօնները, ու այս անգամ ինք որ աշակերտած էր Կարա-Մուրզայի, ինք՛ սկսաւ պատարագը երգ առ երգ բազմաձայնելով կատարել զանոնք Մայր Տաճարին մէջ) եւ Մակար Եկմալեանի մշակած պատարագներուն:

Վերջին գիրքս, հրատարակուած Երեւանի Կոմիտասի Անուան Կոնսերվատորայի կողմէ Նոյեմբեր 2013-ին, նուիրուած ըլլալով Հայ բազմաձայնային երաժշտութեան դպրոցի հիմնադիր՝ Քրիստափոր Կարա-Մուրզայի կեանքին եւ գործերուն, այլ երգերու շարքին, առաջին անգամ ըլլալով յիշեալ եզակի եւ պատմական արժէք ներկայացնող պատարագը եւս հրատարակուեցաւ (թէ՛ նօթագրութիւնը եւ թէ՛ կատարումը խտասալիկի վրայ):

Ցարդ կորսուած ըլլալով անոր ձեռագիրը, հնարաւորութիւն չկար ծանօթանալու այս պատարագին: Սակայն, 2007-ին, Հայաստան այցելութեանս ընթացքին երբ կրկին անգամ Եղիշէ Չարենցի Անուան Պետական Գրադարանին մէջ կ՛ուսումնասիրէի Կարա-Մուրզայի գործերը, ան Լիմոնճեանի ձայնագրութեամբ արձանագրուած յայտնաբերուեցաւ Ռոմանոս Մելիքեանի դիւանէն: Հրատարակեցի զայն, ինչպէս բոլոր այլ գործերը, եւրոպական հնգատող ձայնագրութեամբ, ոչ թէ անոր ներկայացուցած երաժշտական-գեղագիտական արժէքին համար միայն, այլ՝ պատմական մեծ նշանակութեանը համար եւ որպէս ԱԶԳԱՅԻՆ ԳԱՆՁ:

Այսպիսով ծայր առաւ բազմաձայն պատարագներուն շարքը, որոնցմէ երկուքը, Մակար Եկմալեանի (1856-1905) եւ Կոմիտաս Վարդապետի (1869-1935) մշակումները, դարձան ամենաշատ տարածուած, գործածուած եւ սիրուած պատարագները:

(Իր հետաքրքրութեանը համար սոյն փակագծով աւելցնեմ որ, անկախ յիշեալ երկու պատարագներէն կան հետեւեալ պատարագները եւս, որոնք սակայն իրենց կրած տեղական բնոյթին պատճառաւ կը կատարուին միայն յատուկ շրջանի եկեղեցիներու մէջ: Այսպէս,

Կալկաթայի Հայ գաղութին պատկանող երաժշտագէտ՝ Էմի Աբգարի մշակած պատարագին եղանակը առնուած ըլլալով Պարսկաստանի Նոր Ջուղայի երբեմնի հոգեւոր հովիւէ մը, մինչեւ օրս տարին անգամ մը կը կատարուի ան Նոր Ջուղայի մէջ: Իսկ Պոլսոյ մէջ կը գործածուին Աթմաճեան, Խանճեան, Խորէնեան, Սայր Եղանակ անունով աւանդական, Մանասեան, Չիլինկիրեան, Չուհաճեան, Պարթեւեան պատարագները Պոլսոյ Պատրիարքութեան Թուրքիոյ Հայոց եկեղեցիներու երգչախումբերու կանոնագրին 58-րդ յօդուածին համաձայն:)

Ամենայն Հայոց Կաթողիկոս Սկրտիչ Ա. Վանեցի Խրիմեան (Հայրիկ), (1820-1907), բարձրօրէն գնահատելով Մակար Եկմալեանի բազմաճայնած պատարագը, 1895, Յունիս 7-ին, քիւ 325 յատուկ Կոնդակով[30] կը նուիրագործէ զայն: Այս մասին Գրիգոր Դանիէլեան (Դանիէլ Երաժիշտ), իր «Մակար Եկմալեան» ուսումնասիրութեան մէջ կ'ըսէ, - «Լաւագոյն վկայութիւնն է Խրիմեան Հայրիկի Կոնդակը, որով կոմպոզիտորի ողջ կեանքի եւ ստեղծագործութեան պսակը՝ Պատարագը, հաստատուեց եւ մուտք գործեց եկեղեցի:

«Ահա մի հատուած Կոնդակից՝ քաղուած Ն. Թահմիզեանի յիշեալ (իմա «Մակար Եկմալեան» Գ. Փ.) մենագրութիւնից. «...այսու Հայրապետական Կոնդակաւ քաջալերեմք զքեզ, զի առաւել եւս ի յառաջադիմութիւն նկրտիցիս: Այդ որ միայն մեզ ցանկալի եւ նախանձելի է, այլեւ համաձայն հայոց եկեղեցասէր ժողովրդեան՝ հոգեզմայլութեամբ լսել զքաղցրաձայն երգեցողութիւնս, զոր պաշտէ Հայաստանեայց Եկեղեցին»[31]:

Կոմիտաս Վարդապետի մշակած բարձրարուեստ պատարագը,[32] որ առաջին անգամ հրատարակուեցաւ Փարիզի մէջ 1933-ին, իր համբաւաւոր հինգ սաներէն Վարդան Սարգսեանի «վերատեսչութեամբ», ցարդ կը սպասէ իր հայրապետական նուիրագործումին: Իսկ, 20 Հոկտեմբեր, 1984-ին, Ամենայն Հայոց Կաթողիկոս՝ Վազգէն Ա. Պալճեան (1955-1994), յատուկ Կոնդակով կը նուիրագործէ Ս. Էջմիածնայ Մայր Տաճարի խմբավար՝ Տիար Խորէն Մէյխանէճեանի յօրինած բազմաձայն պատարագը:

Կոնդակին մէջ ի միջի այլոց կը կարդանք.-

«Մենք մօտիկից հետեւած լինելով պատարագի այս երգեցողութեան ստեղծագործական ընթացքին եւ տեղեակ դառնալով Հայաստանի հեղինակաւոր երաժշտագէտների բարձր գնահատանքին, այսու մեր կոնդակով արտօնում ենք եւ յանձնարարում մեր Եկեղեցու

թեմական առաջնորդներին ու հոգեւոր հովիւներին, որ սոյն գործը ընդունելի տարբերակ նկատուի ցարդ նուիրագործուած պատարագի երգեցողութեանց շարքին [Մինչեւ օրս բազմաձայնուած միայն մէկ պատարագ Կաթողիկոսական յատուկ կոնդակով նուիրագործուած է, Մակար Եկմալեանին պատարագը: Գ.Փ.] եւ կատարուի Հայաստանեայց եկեղեցիներում իբրեւ Խորէնեան պատարագ»[33]:

Ցարդ, արարողական նպատակներով մշակուած բազմաձայն պատարագներուն մայր եղանակները եղած էին Եկեղեցւոյ աւանդական եղանակները. ինչպէս – Pietro Biankini-ի, Քրիստափոր Կարա-Մարզայի, Մակար Եկմալեանի, Էմի Աբգարի, Կոմիտաս Վարդապետի, Լեւոն Չիլինգիրեանի պատարագները:

«Խորէնեան Պատարագ»-ին երաժշտութիւնը, սակայն, ամբողջութեամբ անհատական յօրինում է եղած: Այս երեւոյթը, որ նորութիւն է Հայց. Եկեղեցիէն ներս, պէտք է հանգամանօրէն քննուի Կրօնական Բարձրագոյն Խորհուրդին կողմէ, որպէսզի Եկեղեցին յստակացնէ իր դիրքորոշումը հանդէպ եկեղեցական արարողութեանց ընթացքին գործածուող երգ-երաժշտութեան ըլլայ ան բազմաձայն կամ միաձայն: Յատկապէս, որ Հայաստանի վերաանկախացումէն ետք, հայրենի երաժիշտներ սկսած են յօրինել եւ մշակել հոգեւոր երգեր եւ պատարագներ, ինչպէս մեծավաստակ երաժիշտ՝ Արզաս Ոսկանեանին Պատարագը: Նոր իրավիճակ ստեղծուած է: Արդե՞օք եկեղեցիները որպէս արարողական երգ-երաժշտութիւն ըստ կամս պիտի գործածեն երաժշտականօրէն եւ գեղագիտականօրէն յաջող նկատուած անհատական ստեղծագործութիւն եղող պատարագներ կամ շարականներ:

Զգօն պէտք է ըլլալ չխախտելու համար մեծ իմաստութեամբ եւ հեռատեսութեամբ հաստատուած եկեղեցական աւանդութիւնները եւ պահելու՝ աշխարհի բոլոր ծագերուն մէջ գործող Հայ Եկեղեցիներուն համաձայնեցնող եւ համահունչ երգ-երաժշտութիւնը, որով Հայ ժողովուրդը իր հարազատ տանը նման կապուած կը մնայ իր Եկեղեցիին եւ համախմբուած՝ իր ազգակիցներուն հետ: Այլ խօսքով, Հայ Պատարագի համաձայնեցնող երգեցողութիւնը, իրեն յատուկ նկարագրովը, Հայ ժողովուրդի զաւակներուն հոգիները իրարու զօդող, նոյն ազգին անդամներ ըլլալու իմացութիւնն ու գիտակցութիւնը ներշնչող հզօրագոյն ազդակը ըլլալու կարողութիւնն ու հանգամանքը երբեք չխախտենք, չփոխենք եւ չկորսնցնենք:

Ինչ կը վերաբերի ժողովուրդի (հայրենիքի եւ սփիւռքի) կրօնական եւ հոգեւոր - գեղագիտական - դաստիարակութեանը, որմէ յատկապէս հայրենի ժողովուրդը զրկուած էր երկար տասնամեակներէ ի վեր, ոչ միայն ժողովուրդը, այլ՝ Եկեղեցին, ինքը պէտք է գործնականապէս գնահատէ՝ պատուէրներով քաջալերէ եւ հովանաւորէ այն ստեղծագործող երաժիշտները, որոնք իրենց կրօնաշունչ ու ազգային հոգեւոր բարձրարուեստ երկերով պատրաստ են Եկեղեցիէն դուրս, համերգասրահներէ ներս որակաւոր եւ գեղագիտական բարձր մակարդակի կատարումներով սնուցանել ժողովուրդին հոգեւոր ներաշխարհն ու հարստացնելով զայն կեանքի կոչել անոր քրիստոնէական, ազգային, եկեղեցասիրական եւ բարեպաշտական զգացումները:

Այս կ'ըսեմ, որովհետեւ Երեւանի մէջ, 2006-ի Հոկտեմբերին տիկինս ու ես ներկայ ըլլալով հայրենի երաժշտահան (composer) Եղուարդ Սաղոյեանի «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» օբերային համերգային կերպով ներկայացուած (անշուշտ հայերէնով) հոյակապ կատարումին, կրօնական յոյզերով եւ հոգեկան ապրումներով անհուն օրէն լիցքաւորուած եւ լաւագոյն տպաւորութիւններով դուրս եկանք սրահէն:

Այստեղ յատուկ կարեւորութեամբ կ'ուզեմ յիշել արդի Հայոց Պատմութեան մէջ նմանը չտեսնուած ծաւալով եւ չափերով Ամենայն Հայոց Հայրապետ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսին կատարած վիթխարի իրագործումները, եկեղեցաշէն ու ազգաշէն տիտանական ձեռնարկները, ինչպէս՝ բազում եկեղեցիներու (խոնարհուած եւ նոր) նորոգում եւ կառուցում, հարիւրաւոր եկեղեցականներու պատրաստութիւն եւ ձեռնադրութիւն, հայրենի եւ սփիւռքի (հին եւ նոր) թեմերու հաստատում ու աշխուժացում, Ս. Էջմիածնայ Մայր Աթոռի նիւթական, ֆիզիքական եւ հոգեւոր համալրային վիճակներու ու արժէքներու ծաղկում ու ամրապնդում, եկեղեցասէր երիտասարդական շարժումներու կազմակերպում, ազգային հոգեւոր արժէքներու հոգատարութիւն եւ պահպանում, ազգային-պատմական ու եկեղեցական-պաշտամունքային բազմատեսակ եւ հարուստ գրականութեան հրատարակութիւններով հոգեւոր դաստիարակութեան մատակարարում, հիւանդանոցի եւ դարմանատուներու հաստատում, եւայլն: Վեհափառին հեռատես ու իմաստուն համագործակցութիւնը Պետութեան հետ Եկեղեցին, Հայրենիքն ու Ազգը միասնացած եւ համաձուլուած, որպէս մէկ ամբողջութիւն, ամուր կը պահէ Քրիստոնեայ Հայաստանին Քրիստոնեայ նկարագիրը: Շնորհիւ այս բոլորին, այսօր, Հայց. Եկեղեցին եւ Հայ

ժողովուրդը կ'ապրին քրիստոնէական-հոգեւոր կեանքի լուսաւոր վերածնունդ:

Դաշնաւորուեցան եւ մշակուեցան նաեւ զանազան շարականներ, հոգեւոր երգեր, մեղեդիներ, գանձեր, տաղեր, Տէր ողորմեաներ, եւայլն: Այս երաժիշտներու հոյլին կը պատկանին Նիկողայոս Թաշճեան, Քրիստափոր Կարա-Մուրզա, Մակար Եկմալեան, Կոմիտաս Վարդապետ, Վարդան Սարգսեան, Ռուբիկ Գրիգորեան, Եդուարդ Յակոբեան, Նիկողոս Թահմիզեան, Գրիգոր Փիտէճեան[34], Երուանդ Երկանեան, Խորէն Մէյխանէճեան, Ջարեհ Արքեպս. Ազնաւորեան, Գրիգոր Դանիէլեան (Դանիէլ երաժիշտ), Գրիգոր Առաքելեան, Մեղրիկ Ծ. Վրդ. Քարիքեան, եւ այլք:

Կը վերջացնեմ սոյն ուսումնասիրութիւնս մեծ հայագէտ եւ գրագէտ Արշակ Չօպանեանի Հայ Եկեղեցւոյ շարականներու մասին գրած հետեւեալ հիացական տողերով.

> «...Ի՜նչ խոր շեշտ հաւատքի, ի՜նչ հզօր քոհչք կրօնական զգացման, ի՜նչ բարձր վերացում աստուածային խոկմանց, ի՜նչ ճոխութիւն վեհ մտածմանց, պերճ պատկերներու եւ վսեմ քացատրութեանց, եւ ի՜նչ լեզուի անբացատրելի ներդաշնակութիւն՝ այդ երգերուն մէջ, որ դեռ այնչափ երիտասարդ են դարաւոր կեանքէ մը յետոյ, եւ այդ ամենուն հետ, այն ինչ անոյշ, անբացատրելի կերպով անոյշ երաժշտութիւն է, որ նիւթին ու բառին համեմատ, երբեմն տրտում, մելամաղձութեան արցունքներով կը թաւալի, երբեմն զուարթ, վերին հրճուանքի լայն յորդումով մը կը ժայթքի, Աստուծոյ զգացմամբ առլցուած հոգիին բոլոր սլաքներն ամենէն խորին արտայայտութեամբ քարգմանելով: Ի՜նչ դիւցազներգութիւն, ի՜նչ ընդարձակ եւ ամբողջական դիւցազներգութիւն է այն, զոր աստուածային Մարտիրոսին վերջին շաբաթէն ներշնչուելով, մաս առ մաս յօրիներ են մեր հայրապետները:[35]

Ահա Հայ Եկեղեցւոյ երաժշտութեան պատմութեան ամփոփ ներկայացումը:

❖ ❖ ❖

Մ. Էջմիածնայ Մայր Տաճարի օծման 1700-ամեակին առթիւ, որպէս Հայ Եկեղեցւոյ զաւակներ, ճանչնանք աւելր այնքան հարուստ սրբազան երաժշտութեան պատմութիւնը եւ մեր հոգիները դարձնենք ընդունարան Աստուածային ներշնչում ապրած բանաստեղծ-երաժիշտներու հոգիներէն ծորած Աստուածահունչ աղօթք-երգերուն:

ՅԱՒԵԼՈՒԱԾՈ

Սոյն Յաւելուածով, առ ի գիտութիւն, կու գամ արձանագրել դարերու ընթացքին Հայ Առաքելական Ս. Եկեղեցւոյ Կաթողիկոսական Աթոռին փոխադրուած վայրերուն քուականները ու տեղանունները:

301-ին, Հայոց Տրդատ Գ. թագաւոր (237-330) քրիստոնէութիւնը կը հռչակէ պետական կրօնք:

Գրիգոր Ա. Լուսաւորիչ (302-325) անսալով իր ունեցած երկնային տեսիլքին, Վաղարշապատի մէջ կառուցանելով Ս. Էջմիածինը կը դարձնէ զայն Ամենայն Հայրապետութեան Աթոռը:

484-485-ին, Յովհաննէս Ա. Մանդակունի Կաթողիկոսի (478-490) օրով Աթոռը Ս. Էջմիածինէն կը փոխադրուի Դուին:

927-ին, Յովհաննէս Ե. Դրասխանակերտացի Կաթողիկոսի (898-929) օրով Աթոռը կը փոխադրուի Արկինա:

992-ին, Սարգիս Ա. Սեւանցի Կաթողիկոսի (992-1019) օրով Աթոռը կը փոխադրուի Անի:

1066-ին, Գրիգոր Բ. Գառնեցի-Վկայասէր Կաթողիկոսի (1066-1105) օրով Աթոռը կը փոխադրուի Ծամնդաւ:

1147-ին, Գրիգոր Գ. Պահլաւունի Կաթողիկոսի (1113-1166) օրով Աթոռը կը փոխադրուի Հռոմկլա:

1293-ին, Գրիգոր Է. Անավարզեցի Կաթողիկոսի (1293-1307) օրով Աթոռը կը փոխադրուի Սիս:

1441-ին, Գրիգոր Թ. Մուսաբեկեանց Կաթողիկոսի (1439-1441) հաւանութեամբ Արեւելեան հայրերը Էջմիածնի մէջ կ՛ընտրեն եւ կ՛օծեն իրենց Հայրապետը՝ յանձին Կիրակոս Ա. Վիրապեցիի (1441-1442): Այսպիսով Աթոռը 957 տարիներ հեռանալէ յետոյ կը վերահաստատուի Ս. Էջմիածնի մէջ, որ ցարդ կը մնայ անշարժ ու անսասան: Այժմ, ան ունի իր միաբանութիւնն ու Գէորգեան Հոգեւոր Ճեմարանը: Իսկ Սսոյ մէջ Կաթողիկոսութիւնը կը շարունակուի որպէս Աթոռ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան:

1915-ին, Հոկտեմբեր 15-ին, Սահակ Բ. Խապայեան՝ Կիլիկիոյ Կաթողիկոս (1902-1939), Մեծ Եղեռնի պատճառաւ Հալէպի վրայով կ՛անցնի Երուսաղէմ:

1918-ին, Սահակ Բ. Խապայեան կը վերադառնայ Սիս:

1921-ին, ահաւոր ու աղետալի պայմաններու պատճառաւ կը ստիպուի վերջնականապէս իր ժողովուրդին հետ հեռանալ Սիսէն:

1931-ին, ծեռունազարդ եւ վշտալի Սահակ Բ. Խապայեան Կաթողիկոս, իր ժողովուրդին հետ երկար թափառումներէ ետք Աթոռը կը հաստատէ Լիբանանի Անթիլիաս արուարձանին մէջ, ուր ցարդ կը մնայ ամուր ու հաստատ: Ունի իր միաբանութիւնն ու Դպրեվանքը:

ՅԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ

1- Չափակշռութային

Երաժշտական լեզուի կարեւորագոյն տարրերէն են չափն ու կշռոյթը:

Չափը երաժշտութեան մէջ զօրեղ ու տկար հնչիւններու-ռաքերու, եւ հնչեալ ու անհնչեալ զարկերու յարատեւական եւ շարունակական յաջորդականութիւնն է, որուն միաւորը կը կոչուի հատած (measure): Կան զանազան տեսակի չափեր:

Կշռոյթը չափի հիման վրայ երաժշտական հնչիւններու տեւողական արժէքներուն կամ ժամանակներուն կազմակերպումն է:

Չափը կազմակերպելով կշռոյթը, անոր բաղկացուցիչներուն կու տայ որոշ եւ յատուկ կշիռ:

Չափն ու կշռոյթը անքակտելիօրէն իրարու հետ առընչուած կերպով կ'ընթանան երաժշտական ստեղծագործութեանց մէջ:

Եթէ չափը կազմակերպելով կշռոյթը՝ անոր արտայայտութեան ոյժ կու տայ, ապա կշռոյթն ալ իր կարգին երգին չափը կը կենդանացնէ, կ'աշխուժացնէ եւ կու տայ անոր որոշ նկարագիր:

Չափի եւ կշռոյթի այսպիսի սկզբունքային զարգացումներու իրագործմանց շնորհիւ՝ Հայ երաժշտութիւնը - աշխարհիկ եւ կրօնական - հասած է մեզի չափակշռութային յատկանիշներու հարուստ արտայայտութեան միջոցներով, ինչպէս՝ պարզ, բարդ, ծանր ու ազատ չափերով եւ կշռոյթի տարբեր-տարբեր կառուցուածքներու տեսակներով ու անոնց զանազան զուգորդումներով:

Չափակշռութային երեւոյթով է, որ երկերու մեղեդիները կը ստանան դիմագիծ եւ կը բնութագրուին որպէս հանգիստ ու հանդարտ, փոթորկոտ կամ քնքուշ գործեր:

Եւ վերջապէս չափակշռութային երեւոյթով կ'որոշուի երգի մը տեսակային (genre) պատկանելիութիւնը - քայլերգ, պարերգ, ասերգ եւայլն...:

2- Ձայն

Ձայնը Հայ երաժշտական մտածողութեան եւ լեզուի հիմնական եւ կարեւորագոյն տարրերէն մին է:

Ինչպէս ժողովուրդներ իրենց միտքը արտայայտելու համար զարգացուցած են խօսակցական լեզու, նոյնպէս ալ իրենց հոգեկան զգացումները յայտնելու համար զարգացուցած են ձայնային (modal) հիմք ունեցող ձայնելեւէջներով իրենց երաժշտական լեզուն:

Հայ ժողովուրդը ունենալով իրեն յատուկ հոգեկան կառուցուածք ու անկէ բխած երաժշտական մտածողութիւն, արտայայտած է զայն, նման իր խօսակցական լեզուին, ինքնատիպ երաժշտական ձայնելեւէջային դրսեւորումներով, երաժշտական լեզուով:

Իսկ, երաժշտական ձայնելեւէջային հիւսուածքին մէջ գործածուած ձայնահնչիւններուն իրարու հետ ունեցած կապակցութեանց եւ յարաբերական պաշտօններու նշանակութեանց մէջ կայանալով ձայներու իրարմէ զանազանումն ու տարբերակումը, Հայ ժողովուրդը երաժշտական ձայնելեւէջային այլատեսակ դրսեւորումներով հաստատած եւ կաղապարած է իրեն յատուկ ձայներու տեսակներ:

Յետագային, Հայց. Եկեղեցին իւրացնելով այս ձայներէն ութ տեսակներ՝ դարձուց զանոնք իր երաժշտական տեսութեան խարիսխն ու ըստ այնմ մշակեց եւ զարգացուց իր երգ-երաժշտութիւնը:

Ութ ձայները կոչուած են հետեւեալ կերպով.-

Առաջին ձայն, համառօտագրուած՝ ԱՁ
Առաջին կողմ, համառօտագրուած՝ ԱԿ
Երկրորդ ձայն, համառօտագրուած՝ ԲՁ
Երկրորդ կողմ, համառօտագրուած՝ ԲԿ
Երրորդ ձայն, համառօտագրուած՝ ԳՁ
Երրորդ կողմ, (վար ձայն) համառօտագրուած՝ ԳԿ
Չորրորդ ձայն, համառօտագրուած՝ ԴՁ
Չորրորդ կողմ, (վերջ ձայն) համառօտագրուած՝ ԴԿ

Այս դարձաւ Հայ երաժշտութեան ութձայնի համակարգը:
Ուրեմն կ'եզրակացնենք ըսելով.-

Ձայնը *երաժշտական արտայայտութեան որոշ բանաձեւերով (formulae) - սկզբնաձեւեր, ծաւալման օրինական հաստատ կերպեր, իւրայատուկ յանգաձեւեր - կազմուած մեղեդիի տեսակ է, տիպ է հիմնուած յատուկ ձայնաշարի կամ ձայնաշարերու վրայ:*

Այս գիրքի կապակցութեամբ թելադրելի է ընթերցումը նոր հրատարակուած խորհրդաց միջնադարագիտութեան, Երեւանի Կոմիտասի Անուան Կոնսերվատորիայի Փրոֆէսոր, Դոկտ.՝ Աննա Արեւշատեանի «Հայեղակների Ուսմունքը Միջնադարեան Հայաստանում» չափազանց արժէքաւոր գիրքը:

3- «Աստուածաշունչ, Նոր Կտակարան Յիսուս Քրիստոսի», Նոր Աշխարհաբար բարգմանութիւն, Մատթէոս Աւետարանիչ, Գլ. 5, համար 17:

4- Անդ, Գործք Առաքելոց, Գլ. 2, համար 46:

5- Նոյն, Գլ. 5, համարք 12-14:

6- Անդ, Եփեսացւոց Թուղթ, Գլ. 5, համար 19:

7- Նոյն, Կողոսացւոց Թուղթ, Գլ. 3, համար 16:

8- Ս. Եփրեմ Ասորիի կեանքով եւ գործերով հետաքրքրուողներ կրնան ուսումնասիրութիւնս կարդալ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Պաշտօնաթերթը ՀԱՍԿ-ի 1958, Մայիսի թիւին մէջ:

9- The New Grove Dictionary of Music and Musicians, volume IV, edited by Stanley Sadie, p. 365, 1980.

10- Վանական կեանքի ծագման մասին աւելի ծանօթութիւն ստանալու համար կարելի է կարդալ «Արեւելեան Վանականութեան Ծագումն ու Ծաղկումը Դ. Դարուն» խորագրով ուսումնասիրութիւնս ՀԱՍԿ-ի 1958, Յուլիսի թիւին մէջ:

11- «Աստուածաշունչ», Մատթէոս Աւետարանիչ, Գլ. 9, համար 23:

12- Նոյն, Ղուկաս Աւետարանիչ, Գլ. 7, համար 32:

13- Կցորդ

Միջնադարու երաժշտական գրականութեան մէջ կցորդ *երգատարազը գործածուած է* կցուրդ *երգատեսակի իմաստով:*

Ուստի, զայն կ'ընդունինք որպէս հոմանիշ կցուրդ *երգատեսակին:*

14- Կցուրդ

Կցուրդ *կամ* կցորդ *կոչուած են 4-5-րդ դարերուն Հայ Եկեղեցւոյ աստիճանական զարգացում ապրող երգ-երաժշտութեան հնագոյն երեք երգատեսակները՝ յօրինուած ձեւական նմանողութեամբ Ասորական madrashe-ի եւ յունական «տրոպարիոն»ի:*

Ա. Տեսակ

Երբ պաշտամունքներուն մէջ իշխող երգատեսակները սաղմոսերգութիւններն ու մարգարէական օրհներգութիւններն էին եղած, եկեղեցւոյ հայրեր սաղմոսներուն բնագրային նկարագիրները պատշաճեցնելու համար օրուան իմաստին կամ տօնին, Ս. Գրքի բնագրին հանդէպ իրենց ունեցած երկիւղածութիւնը պահելով, առանց բառերու փոփոխութեանց, փոխանակ ամբողջական սաղմոսներ երգելու, որոշ տուներ եւ հատուածներ ընտրելով տարբեր դասաւորումներով եւ շարքերով - իրարու կցելով - երկու խումբերով, տուն առ տուն փոխասացաբար կ'երգէին որպէս նոր երգ: Եւ կամ ալ, օրուան իմաստը բացայայտող սաղմոսի տուն մը ընտրելէ ու երգելէ ետք կ'անցնէին երգելու ամբողջ սաղմոսը սկիզբէն մինչեւ վերջը: (4-րդ դարուն բերանացի քարգմանութեամբ, իսկ 5-րդ դարուն, Հայ գիրերու գիւտէն ետք, հայերէն գրութեամբ:) Այսպիսի երգերը կոչուեցան «Կցուրդ սաղմոսաց»:

Որպէս օրինակ կը բերեմ Աւագ Հինգշաբթի օրերուն «Ոտնլուայ»ի արարողութեան սկիզբը երգուող «Ծ (ԾԱ)» սաղմոսը, որուն 8-րդ տունը արարողութեան այդ բաժնի նշանակութեան հետ աւելի սերտ առընչութիւն ունենալով, եւ հետեւաբար շեշտելու համար այդ պահուան խորհուրդը, երգեցողութիւնը կը սկսի սաղմոսին 8-րդ տունով ու ապա կ'երգուի ամբողջ սաղմոսը, գլուխէն մինչեւ վերջը՝ ներառեալ 8-րդ տունը: Ուրեմն, 8-րդ տունը կ'երգուի որպէս կցորդ *կամ* կցուրդ *սաղմոսին, այսպէս.*

Տես էջք 81-86, Նկար 10՝ Սաղմոս Ծ (ԾԱ)

Բ. Տեսակ

Զարգացման երկրորդ խումբին պատկանող կցուրդները *առ հասարակ երեքական տուներէ բաղկացած այն փոքր երգերն են, որոնք գրեթէ ամբողջութեամբ սաղմոսներու, մարգարէական օրհներգութեանց կամ Աւետարանական պատմուածքներու բառերով յօրինուած են, եւ*

որոնք կ'երգուէին կցուելով օրուան բուն սաղմոսին եւ մարգարէական օրհներգութեան կամ Աւետարանի ընթերցանութեան:

Սիաւասիկ օրինակ մը այսպիսի կցուրդներէն՝ *«Այսօր կանգնեցաւ»ը, որուն հեղինակն է Ս. Սահակ Հայրապետ: Հինգերորդ դարուն յօրինուած այս կցուրդը յետագային դարձաւ Աւագ Հինգշաբթի օրերուն երգուող «կանոն»ի «մանկունք» շարականը, ինչպէս նաեւ «Ողջոյն»ի արարողութեան ընթացքին երգուող շարականը:*

Տես էջք 87-90, Նկար 11 a,b,c՝ Այսօր կանգնեցաւ

Գ. Տեսակ

Զարգացման երրորդ խումբին պատկանող կցուրդներուն *մէջ կը նկատուի հեղինակներու աւելի ազատ վերաբերմունքը Ս. Գրքի բնագրին հետ: Այսպիսի* կցուրդներուն *մէջ պահուած են Ս. Գրքի բնագրէն միայն տող մը կամ խօսք մը որպէս կրկնակ կամ հիմնաճիւթ, մնացեալը անհատական յօրինում է:*

Որպէս օրինակ կը բերեմ «Վիրաւորեալ յանցանօք...» կցուրդը, *որուն հեղինակն է Մեսրոպ Մաշտոց եւ ներկայիս կ'երգուի Մեծ Պահոց 25-րդ օրուան (Հինգշաբթի) առաւօտուն որպէս «ողորմեա» շարականը:*

Կ'ուզեմ ընթերցողին ուշադրութեան յանձնել կցուրդին *կրկներգը՝ «եւ ողորմեա ինձ աստուած ըստ մեծի ողորմութեան քում», որ սաղմոս Ծ (ԾԱ)ի առաջին նախադասութիւնն է, անշուշտ առանց «եւ»ին. իսկ մնացեալը Մեսրոպ Մաշտոցին յօրինումն է:*

Տես էջք 91-94, Նկար 12 a, b, c՝ Վիրաւորեալ յանցանօք

Այստեղ փակագծով մը ըսեմ հետեւեալը.-

(Վերը կատարած «որոպարիոն»ի յիշատակութիւնս պէտք չէ մտածել տալ ընթերցողին թէ՝ ասիկա Յունական երաժշտութեան ներմուծումն է մեր ազգային եկեղեցւոյ երաժշտութենէն ներս, ինչ որ շատերու՝ մինչեւ իսկ յայտնի երաժշտագէտներու սխալ ուղեցոյց հանդիսացած է:

Կարելի չէ Յոյն երաժշտութիւնը Հայ լեզուի շեշտադրութեամբ երգել եւ ճիշդ ու իմաստալից հնչողութիւն ստանալ, այն հիմնական պատճառաւ՝ որ Յոյն եւ Հայ լեզուները չեն պատկանիր նոյնանման շեշտադրական կամ հնչաբանական լեզուներու խումբին: Իրարմէ

ունեցած տարբեր շեշտադրական օրէնքներուն պատճառաւ իրենց երգ-երաժշտութիւնը եւս կ'ըլլայ տարբեր, քանի որ երգ յօրինելու հիմնական սկզբունքներէն մին է՝ երգի մեղեդին կառուցանել համաձայն տուեալ գրական բնագրի լեզուային հնչաբանական օրէնքներուն:)

Կցուրդները յօրինուած են արական խմբերգային եւ մեներգային կատարումներու համար: Խմբերգայինները առաւելաբար վանկային իսկ մեներգայինները աւելի ծորային մեղեդիական ոճ ունին:

Վանկային երգառճով յօրինուած կցուրդները կապուած ըլլալով սաղմոսերգական ոճին, կոչուած են նաեւ սաղմոսատիպ:

Հայ եկեղեցւոյ երաժշտութեան մէջ տեղի ունեցած զարգացման այս հսկայական շարժերը հաստատելու, տեղաւորելու եւ հունաւորելու համար ժամանակի կարիքը կար, ու այդ շրջանը հանդիսացաւ 6-րդ դարը:

Այս է պատճառը որ երաժշտական յօրինման տեսակէտէն 6-րդ դարը աւելի լուռ դար մը եղած է:

15- Կացուրդ

Եկեղեցւոյ հայրերուն մօտ՝ Ս. Գրքին չկառչելու գաղափարը հետզհետէ աւելի խորանալով, համաքրիստոնէական եկեղեցւոյ հայրերուն սահմանած օրէնքները անդրանցնելով՝ յառաջ եկաւ Ս. Գրքէն բոլորովին անկախ բնագրով, նիւթով աւելի տեղականացած ու ազգայնացած, չափածոյ բանաստեղծութեանց յօրինման ոճն ու բանաստեղծութեանց համապատասխանող չափակշռոյթով եւ բարձրօրէն կազմակերպուած անհատական մեղեդիական կառոյցով ստեղծագործուած երգատեսակը՝ կացուրդը, որ կցուրդին բաղդատմամբ աւելի ծաւալուն, բարդ կառոյցի եւ յաճախ ալ Այբբենական շարքով - ակրոստիկոսով - գրուած տօնական մեծ երգ է:

Յիշատակութեան արժանի ստեղծագործութիւն է 7-րդ դարու բազմահմուտ Կոմիտաս Աղցեցի Կաթողիկոսի «Սնձիկք նուիրեալք» գեղեցկահիւս կացուրդը, զոր հեղինակը յօրինած էր 618-ին՝ իր կառուցած Ս. Հռիփսիմէ հրաշագեղ տաճարի օծման առթիւ:

Հոգեւոր երգագրութեան պատմութեան մէջ դէպի զարգացում առաջնորդող հսկայ եւ յանդուգն քայլ էր Աղցեցիի այս ստեղծագործութիւնը, որով Եկեղեցւոյ կողմէ իսկ հաստատուած շարականագրութեան օրինաչափութիւնները անտեսելով ու անդրանցնելով, բոլորովին նոր հայեցողութեամբ, նոր փիլիսոփայութեամբ, նոր գրելաոճով եկե-

ղեցական երաժշտութեան համար նոր ուղեցոյց եւ չափանիշ հաստատելով ստեղծագործական ծով աշխարհի մը բացաւ – ճիւթի ազատութիւն, երաժշտական եւ կառուցուածքային ընտրութիւն – յաջորդող սերունդներուն համար:

Մեծագոյն յանդգնութիւնը Ս. Գիրքէն կտրուիլն էր: Միշեւ իր օրը կցուրդներուն ճիւթերը պէտք էր առնուէին Ս. Գիրքէն:

Կոմիտաս Կաթողիկոս, իր երգին ճիւթը առաւ տեղական պատմութենէ եւ ոչ թէ Ս. Գիրքէն: Միշեւ իր օրը Հայ Եկեղեցին տակաւին կը հետեւէր համաքրիստոնէական եկեղեցւոյ շրջանէն մնացած ազատ կամ շատ զուսպ չափական գրելաոճին: Սակայն, Աղցեցի հաստատեց տաղաչափեալ բանաստեղծական գրելաոճը հոգեւոր երգագրութենէն ներս եւ վերջապէս երեք տունի դրութեան պարտադրանքը մեղմացնելով իր երգը յօրինեց Այբբենական շարքով, երեսունվեց տուներով:

«Անճինք նուիրեալք» շարականին լուսապատճենը յատկապէս այստեղ կը դնեմ՝ ցոյց տալու համար հոգեւոր երգագրութեան զարգացման աստիճանն ու կցուրդին եւ կացուրդին միջեւ եղած հսկայական տարբերութիւնը: Սիա Այբբենական կարգով յօրինուած գոհար շարականը: (Գրաբար, Աշխարհաբար ու Անգլերէն:)

Տես էջք 95-115, Նկարք 13 a, b, c՝ Շարական Անճինք Նուիրեալք

(Կրկին 1700-ամեակի առթիւ «Անճինք նուիրեալք» շարականի մասին պատմական եւ վերլուծական մեծածաւալ աշխատանք մը պատրաստած էի, որ վերջերս առանձին գրքով լոյս տեսաւ «Անճինք Նուիրեալք Շարականը» անունով:)

Կացուրդ *երգատեսակը կոչուած է նաեւ «Կանդակ», որ Յունական «կոնդակիոն» կոչուող երգատեսակին համազօր է: Պէտք չէ մոռնալ որ 7-րդ դարը մեզի համար յատկանշուած է որպէս Յունաբան դպրոցի դար: Մեր հոգեւոր մշակոյթը, այդ դարուն յատկապէս, սերտօրէն կապուած ըլլալով Յունական մշակոյթին՝ մեր գրական լեզուին մէջ մտածելու կերպի հետ ներառնուեցան նաեւ Յունական դարձուածաբանութիւններ, քերականական օրէնքներ, զարդուդութիւններ, բառեր եւայլն: Այդպիսի բառերէն էր «կանդակ»ը:*

Այստեղ կարեւոր կը նկատեմ յիշեցնելու որ, թէեւ Յոյն Եկեղեցւոյ երաժշտութենէն առնուեցան երգատեսակներու անուններ եւ ձեւեր, ինչպէս **տրոպարիոն** *ու* **կանդակը** *– ու աւելի ուշ՝* **կանոնը**, *որ*

իր կարգին պիտի տեսնենք – անոնց բնագրային ու երաժշտական բովանդակութիւնները սակայն եղան զուտ Հայկական ստեղծագործութիւններ:

16- Շարական

Եօթներորդ դարուն, երբ Հայ Եկեղեցիէն ներս հոգեւոր երգերուն մուտքը տակաւին ազատ էր ու անոնց քիւը բազմացած, աշխարհագրական դիրքով իրարմէ հեռու գտնուող եկեղեցականներ, երաժիշտներ, չիմանալով այլ եկեղեցիներու մէջ գործածուող երգերը, արարողութեանց ընթացքին սկսած էին անհասկացողութիւններու եւ շփոթութիւններու տեղի տալ:

Ներսէս Գ. Տայեցի (Իշխանցի) Կաթողիկոս (641-661) այսպիսի անպատեհութիւնները կասեցնելու համար, ժամանակի յայտնի երաժիշտներէն՝ Շիրակի դպրեվանքի առաջնորդ Քարսեղ Վրդ. Ճոնի կը յանձնարարէ գոյութիւն ունեցող հոգեւոր երգերէն լաւագոյնները ընտրելով կազմել կցուրդարան մը, որպէսզի կանոնականացնելով ընդհանրացնէ զայն:

Ասիկա եկեղեցւոյ կողմէ պաշտօնապէս ընդունուած հոգեւոր երգերու առաջին հաւաքածոն կը հանդիսանայ, որ կը կոչուի «Ճոնընտիր»: Սակայն, ազատօրէն երգեր յօրինելու ընթացքը շարունակուեցաւ՝ քանի որ տակաւին բոլոր տօները իրենց յատուկ երգերը չունենալով նոր երգերու պահանջ կար:

Ութերորդ դարուն, հմուտ իմաստասէր եւ երաժշտագէտ Ստեփանոս Եպիսկոպոս Սիւնեցի (?-735), ժամերգութեանէն ներս կարգ ու կանոն մտցնելու համար՝ հաստատեց կանոնի դրութիւնը:

Սիւնեցի կանոնի չէնքին կառուցուածքը առնելով Յոյն Եկեղեցւոյ երաժշտութեան կանոնէն, կցուրդներով եւ կացուրդներով կազմեց Հայ Եկեղեցւոյ երաժշտութեան կանոնը, այսպէս.-

1- Օրհնութիւն, սղագրուած՝ օրհ
2- Հարց, սղագրուած՝ հրց
3- Գործք, սղագրուած՝ գ
4- Մեծացուսցէ, սղագրուած՝ մեծ
5- Ողորմեա, սղագրուած՝ ողր
6- Տէր յերկնից, սղագրուած՝ տէր
7- Ճաշու, սղագրուած՝ ճշ

8- Մանկունք, տպագրուած՝ մնկ
9- Համբարձի, տպագրուած՝ հմբ:

Ասոնցմէ իւրաքանչիւրը ունի առանձին կազմ, որ սկզբնապէս առելի, բայց յետագային 3-4 տուն երգերէ բաղկացած է:

(Այստեղ անգամ մը եւս յիշելու ենք որ, երբ կ'ըսենք Ստեփանոս Սիւնեցի **կանոն***ը առաւ Յոյն Եկեղեցւոյ երաժշտութեան* **կանոն***էն, պէտք չէ բնաւ հասկնանք թէ՝ ան* **կանոն***ի կառուցային բովանդակութիւնն ու երաժշտութիւնը անկէ առած է, այլ՝ միայն գաղափարն ու անունը:*

*Այս հարցով զբաղող հմուտ եւ հեղինակաւոր միջնադարագէտ եւ դոցենտ, ռէկտոր Տիար Սիեր Նավոյեան «Մանրուսում Հոգեւոր Երաժշտութեան Պատմութեան, Տեսութեան Եւ Գեղագիտութեան Հարցեր» Միջազգային Երաժշտագիտական Տարեգիրք, Հատոր Գ.ի մէջ հրատարակուած Երեւան, 2009-ին, էջք 39-116 ունի «Քիւզանդական Ազդեցութեան Վարկածը՝ Հայ Հիմներգութեան Կարգ (***Կանոն***) Ժանրի Առնչութեամբ» անունով բաղդատական եւ փաստավաւերագրական արժէքաւոր ուսումնասիրութիւն մը որով եկած է այն յստակ եզրայանգումին թէ՝ Ստեփանոս Սիւնեցիի հաստատած* **կանոն***ը, ի բաց առեալ անունէն, ոչինչով համանմանի է Յոյն Եկեղեցական երաժշտութեան* **կանոն***ին:)*

Կանոն*ի իւրաքանչիւր բաժինի կատարումէն առաջ կ'ասերգուի համապատասխան Ս. Գրային օրհներգութիւնը: Այսպիսով հին ընկալեալ սովորութիւնը պահելով, հոգեւոր երգը՝ շարականը որպէս* կցորդ *կը հետեւի օրհներգութեան:*

Կանոն*ի իւրաքանչիւր բաժինը կոչուած է համաձայն իրմէ առաջ ասերգուող Ս. Գրային բնագրին. այսպէս, «Օրհնութիւն»ին նախորդող Ս. Գրային ասերգութիւնն է.-*

«Օրհնեցուք զՏէր զի փառօք է փառաւորեալ: (Գիրք Ելից, Գլ. 15, համար 21...):

կամ

«Մեծացուսցէ»ին նախորդող օրհներգութիւնն է Դուկ. Ա 46ը:
«Ողորմեա»ին նախորդող սաղմոսն է Ծ-ն:
«Տէր յերկնից»ին նախորդող սաղմոսն է ՃԽԸ-ը:
«Մանկունք»ին նախորդող սաղմոսն է ՃԺԲ-ը, եւայլն:

Երգերու այս շարքը կոչուեցաւ շարք, կարգ, ինչպէս նաեւ սարք:

Այստեղ, որպէս օրինակ կը ներկայացնեմ Յակոբ Կլայեցիի յօրինած Աստուածամօր ծննդեան նուիրուած Կանոնին լուսապատճենը առնուած 17-րդ դարու ձեռագիր շարակնոցէ մը եւ տրամադրուած մեզի Երեւանի Մեսրոպ Մաշտոց Մատենադարանի տեսչութեան կողմէ:

Ինչպէս վերը տեսանք, Սիւնեցի Կանոն-ին շէնքը հիմնեց ինք բաժիններով եւ կազմեց զանոնք տարբեր-տարբեր հեղինակներու կցուրդներով, կացուրդներով եւ նոյնը ըրին իրեն յետնորդները:

Այստեղ, երբ Ս. Աստուածամօր Ծննդեան շարականին որպէս հեղինակ Յակոբ Կլայեցին կը ճանչնանք, այդ անպայմանօրէն չի նշանակէր թէ՝ ամբողջ Կանոնին հեղինակն է ան: Այս պարագային Կանոնի Օրհնութեան (օրհ) բաժնի առաջին էական երկու պատկերներուն միայն հեղինակն է: Իւրաքանչիւր պատկեր կազմուած է չորս տուներով (Օրհնութիւններուն պատկերները կազմուած կ'ըլլան նաեւ երեքական տուներով:): Այս տուները, դաս առ դաս, քիչ մը ծանր ընթացքով կ'երգուին: Սակայն, նախ քան երկրորդ պատկերին վերջին երկու տուներու երգումին անցնիլը, այս անգամ պատկեր առ պատկեր քաղուածքի շարքի շարականները կ'երգուին քիչ մը աւելի չափաւոր ընթացքով, որոնք առ հասարակ տասը պատկերներէ բաղկացած կ'ըլլան, երբեմն ալ մի քանի աւելի կամ մի քանի պակաս պատկերներէ:

Հետեւաբար, այս Կանոնին առաջին երկու պատկերները կազմուած ըլլալով չորսական տուներէ, յաջորդաբար առաջին վեց տուները դաս առ դաս երգուելէ ետք, ինչպէս նաեւ Քաղուածքի տասը պատկերները, որոնք դժբախտաբար, ձեռաց Շարակնոցին զանազան էջերուն վրայ ցրուած ըլլալով չենք ներկայացուցած մեր բերած օրինակին մէջ, եւ վերջապէս, Օրհնութիւնը կ'աւարտի երգումովը Կանոնի երկրորդ պատկերին վերջին երկու տուներուն կցելով փառատրութեան երկու մասերը, այսպէս՝

«Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ.» եւ վերջընթեր տունը,

«Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս, յաւիտենից, ամէն:» եւ վերջին տունը:

Ձեռագիր Կանոնին ընթերցումը դիւրացնելու համար իւրաքանչիւր էջին դէմը կը դնեմ 1936-ին Երուսաղէմ տպագրուած ձեռաց շարակնոցին համաձայն Կանոնին լուսապատճենը:

Ընթերցողը այս սարքին մէջ պիտի նկատէ բացակայութիւնը «Մանկունք» բաժնի շարականին: Այս չի նշանակեր որ «Մանկունք»

շարական չ'երգուիր սոյն Կանոնին *կատարման օրը: Նման պարագաներուն կիրարկութիւնը (practice) այն է, որ երեկոյեան «Համբարձի» բաժնին շարականը, որ է այստեղ «Նոր սիովն ծնեալ...» շարականը, կ'երգուի նաեւ որպէս առաւօտեան «Մանկունք» շարականը: Այլ կերպ մըն ալ այն է, որ նոյն շարականին առջեւ սղագիր կերպով կը դրուին «Մանկունք» եւ «Համբարձի» նշումները: Գրիչներ այս ձեւին կը դիմէին աշխատանքի, մելանի եւ մագաղաթի խնայողութեանց համար եւս:*

Տես էջ 116, Նկար 14՝ 17-րդ դարու ձեռագիր Շարակնոցի օրինակ

Տես էջք 117-131, Նկար 15՝ Յակոբ Կլայեցիի կանոնը
նուիրուած Աստուածամօր Ծննդեան:
(17-րդ դարու ձեռագիր եւ համապատասխանող
տպագրուած շարականը:)

Կանոնի *իւրաքանչիւր երգ առանձինն առած կոչուեցաւ «շարական երգ»: Այստեղ «շարական»ը գործածուած է որպէս ածական: Բայց, 10-րդ դարու երկրորդ կէսին, երբ* կանոն*ները ընդհանրացան ժամերգութեանց մէջ, շարական բառը սկսաւ գործածուիլ գոյականաբար առանձինն, նոյն շարքին պատկանող երգ իմաստով:*

Թէեւ, ըստ Հրաչեայ Ամառեանի «Արմատական Բառարան»-ի էջ 502-ի Ա. սիւնակով հայթայթուած տեղեկութեան, շարական բառին առաջին գործածութիւնը Հայ Գրականութեան մէջ կու գայ 11-րդ դարէն, այսպէս.- «Ըստ Ամատունի (Հայոց Բառ ու Բան, էջ 511) "բառս առաջին անգամ յիշում է ԺԱ դարում ապրող Պօղոս Վրդ. Տարօնեցին՝ ասելով. իսկ ի կիրակէի եւ ի մարտիրոսաց յիշատակս խնկարկութեամբ եւ շարականաւ (կատարել)"»:

Սակայն նորագոյն ուսումնասիրութեանց համաձայն, արդէն իսկ 9-րդ եւ 10-րդ դարերու երկաթագիր «Մաշտոց»-ներու (արարողութեանց մատեան) մէջ կը տեսնուի շարական բառին գործածութիւնը, այսպէս.- «Եւ սկսանին 'զԱմբիծն' եւ 'զԱրարիչն' շարականաւ: Եւ ասեն 'Գովեա Երուսաղէմ' շարականաւ:» (*Հայնագրեալ Շարական Հոգեւոր Երգոց*, Յառաջաբան էջ X, ԳԱՆՁԱՍԱՐ Աստուածաբանական Կենդրոն, Երեւան, 1997:)

Այսպիսով, քանի կցուրդ *սաղմոսացէն, որ առաջին խումբի* կցուրդ *նշանակած էինք վերը, միւս* կցուրդներն *ու* կացուրդները *այլեւս դառնալով* կանոնի *բաղադրիչ երգ՝ կոչուեցան շարական. իսկ*

կցուրդ սաղմոսացը եկեղեցւոյ մէջ մինչեւ օրս կը գործածուի իր առաջին իմաստով:

Տակաւին երկար ժամանակ պիտի առնէր որպէսզի, տարուան բոլոր տօները ունենային իրենց կանոնները:

Ներկայիս, շարական երգատարազը կը գործածուի, տեղի ու անտեղի կերպով, Հայ Եկեղեցւոյ երգ իմաստով:

17- Գանձ

Գանձ երգատեսակին հիմնադիրն է սրբակրօն մեծ վանական, աղօթասաց, բանաստեղծ-երաժիշտ Ս. Գրիգոր Նարեկացի (950-1010):

Նարեկացիի գանձերը Եկեղեցւոյ մէջ երգուող քարոզներ, ճառանման տօնական մաղթանքներ են՝ ուղղուած Ս. Հոգւոյ գալստեան, Եկեղեցւոյ եւ Ս. Խաչին:

Նարեկացիի այսպիսի ստեղծագործութիւններուն բնագիրները սկսելով «Գանձ» բառով, «Գանձ» բառը դարձաւ անունը այս նոր երգատեսակին:

Ժամանակի ընթացքին, սակայն, Եկեղեցւոյ բանաստեղծ-երաժիշտ հայրեր ծաղկեցնելով եւ զարգացնելով զայն սաղմոսատիպ վանկային ոճէն բարձրացուցին երգի եւ մինչեւ իսկ տաղային արուեստի տարրերով յագեցած, ծորային անցքերով լեցուն մեղեդիակերտ երգատեսակի:

Այստեղ, կ՛արժէ յիշել Աւագ Հինգշաբթի երեկոներուն, Ոտնլուայի հոգեյոյզ արարողութեանց ընթացքին երգուող, Գանձասաց Մխիթար Այրիվանեցիի (13-րդ դար) բոլորիս այնքան սիրելի, «Սիրտ իմ սասանի» Գ.Ջ սրտառուչ գանձը, որ առաւել եւս զեղեցկացած ու խորացած ձեւով հասած է մեզի՝ շնորհիւ Կոմիտաս Վարդապետի հանճարային մշակումին: Ահաւասիկ Գանձը.-

Տես էջ 132, Նկար 16՝ Գանձ Բ.

Գանձերուն տեսակներէն մին էր եղած նաեւ ողբական գանձերու տեսակը:

Հայ ժողովուրդը հիւէն, հեթանոսական շրջանէն մնացած սովորութեամբ մը ննջեցեալներուն վրայ ողբական գանձեր (երգեր) կ՛երգէր:

Հեթանոսութեան շրջանին քուրմեր, գուսաններ, լալամայրեր եւ եղերամայրեր կը կատարէին այս պաշտօնը: Քրիստոնէական ըմբռնումին համաձայն այս պաշտօնը հեթանոսական բարք նկատուելով արգիլուեցաւ: Հակառակ անոր, սակայն, անպաշտօն կերպով, լալամայրերուն եւ եղերամայրերուն գիծը շարունակուեցաւ, իսկ քուրմերուն եւ գուսաններուն գիծն ալ եկեղեցական ու աշխարհական գանձասացներով եւ ողբասացներով փոխարինուեցաւ:

Այստեղ կ'արժէ որպէս օրինակ բերել բազմավաստակ եկեղեցագէտ-պատմաբան՝ Արժ. Դոկտ. Ջաւէն Ս. Քհնյ. Արզումանեանի վերջերս յայտնաբերած 1429-ին գրուած ձեռագիր «Առձեռն Ծիսարան Սաշտոց»-է մը քաղած երկու ծաւալուն ողբական գանձերէն միայն մի քանի տուները.-

ՈՂԲ ԹԱՂՄԱՆ ՏՂԱՅԻ

Արարիչն արարածոց մեզ բարկացաւ,
քաղցըր բնութիւն աստուածային մեզ դառնացաւ.
սուրըն հրեղէն այսօր յերկնից տարածեցաւ,
հուրն ի տանէն աստուածային բորբոքեցաւ:

Եղուկ վայ հազար բերան զինչ գործեցաւ,
նորապսակ հարսն ու փեսան բաժանեցաւ.
քանի մանուկ մորմոքելի ի հող դարձաւ,
եւ թէ քանի մայր որդեմեռ մորմոքեցաւ:

Անմեղ տղայքն ի հրեշտակէ խոցեալ լինին,
եւ թաւալին յառջեւ ծնողին ողորմագին.
աղիողորմ ի գիրկըս մօրն նուաղէին,
որպէս ծաղիկ գարնանային թարշամէին:

* * *

Իսկ, մահացող տղուն մահուան թուականը հաստատագրուած ըլլալով հետեւեալ կերպով, գիտնական Տէր Հայրը կարողացած է այլապէս անբուակիր ձեռագրին թուականը ճշդել:

«Գեղեցիկ գոյն երեսաց քառամեցաւ,
այն ծովային աչքն ի լուսոյն պակասեցաւ.
վայելուչ զօրեղ բազուկըն կապեցաւ,
լար արծաթոյն ոսկի մանեակըն մանրեցաւ.
ի ուր հարիւր եօթանասուն թուականին,
եւ համարով ամք որ անցնին ուր աւելին:»

(Այսինքն, Հայոց թուականով 870+8=878-ին, Քրիստոսի թուականով՝ 878+551=1429-ին:)

Ժողովուրդին կողմէ այնքան սրտամօտիկ սովորութիւն մըն էր այս, որ մինչեւ իսկ 19-րդ դարուն Հայ Եկեղեցին տակաւին յԱբոռոյ կը հրահանգէր ողբական գանձեր չերգել Եկեղեցիէն ներս:

Ահա այն կանոնը, զոր գրած ու հաստատած էր Ներսէս Ե. Աշտարակեցի Կաթողիկոս (1843-1867).

«Պատուիրում ենք քահանաներին, որ յորդորեն կանանց եկեղեցում չլալ եւ չճչալ, որովհետեւ սուգը հեթանոսաց գործ է. արգելում ենք նոյնպէս եկեղեցում "Գանձ" ասել, որ տրամադրում է դէպի լացը:» (Մելիք-Թանգեան, Հայոց Եկեղեցական Իրաւունքը, Ա. Գիրք, 1903, Շուշի, էջ 608, Յօդ. 47:)» («Ծիսագիտութիւն», Նորայր Արք. Պողարեան, էջ 68:)

«Տեղ տեղ հոգեւորականները մեռելական գանձեր կ'երգէին ննջեցեալներուն վրայ՝ մինչեւ ներկայ (20-րդ) դարուն սկիզբները:» (Նոյն)

Գլխաւոր գանձասացներն են.

10-րդ դար -	*Գրիգոր Նարեկացի*
12-րդ դար -	*Ներսէս Շնորհալի*
12-13-րդ դար -	*Յովհաննէս Երզնկացի Պլուզ*
	Մխիթար Այրիվանեցի
	Գէորգ Լամբրոնացի
14-րդ դար -	*Խաչատուր Կեչառեցի*
	Յովհաննէս Թլկուրանցի

Վարդան
Յակոբ
Մովսէս Երզնկացի
Սարգիս
Գրիգոր
Համազասպ
Պօղոս
Ստեփանոս
Մկրտիչ
Մատթէոս Ջուղայեցի
Մանուէլ Եպս. Քջնոյ
15-րդ դար - Գրիգոր Խլաթեցի Ծերենց
Մկրտիչ Նաղաշ
Առաքել Բաղիշեցի
Մատթէոս Գանձասարեցի
17-րդ դար - Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեան

18- Երգ

Կանոնի դրութեան հաստատումէն ետք՝ այն երգերը (հին կամ նոր), որոնք մաս չկազմեցին կանոնին՝ կոչուեցան երգ: Անշուշտ բացի այն պարագաներէն՝ երբ երգը որոշ տեսակի կառուցողական հիմունքներով յօրինուած ըլլար, ինչպէս՝ գանձ, տաղ, եւայլն:

Ամենայայտնի երգերէն են համաքրիստոնէական Եկեղեցւոյ շրջանէն հասած «Փառք ի բարձունս»ը, «Լոյս Ջուարթ»ը, ապա Ներսէս Շնորհալիի «Առաւօտ Լուսոյ»ն, «Նորաստեղծեալ»ը, աւելի ուշ՝ Սիմէոն Երեւանցի Կաթողիկոսի (1763-1780) «Տէր Ողորմեա»ն, եւայլն:

Տես էջ 133, Նկար 17՝ ձեռագիր խազագրուած
«Առաւօտ Լուսոյ» երգի

19- Տաղ

Հայերէն լեզուին մէջ տաղ բառը մէկէ աւելի նշանակութիւն ունեցող բառ է: Վաղ ժամանակներէն սկսեալ գործածուած է երգ իմաստով եւս ու անցած՝ ժողովրդական ասացուածքներու մէջ, ինչպէս՝ «Աշուղի պէս խաղ ասա, բլբուլի պէս տաղ ասա»:

Բացի ընդհանուր երգի այս իմաստէն, տաղը միջնադարեան երգարուեստի տեսակ (genre) է, ունի կառուցուածքի իւրայատուկ յատ-

կանիշներ, ինչպէս՝ ծաւալում մեղեդայնութիւն, զանազան ձայներու (mode) շղթայատրումներ, մեծակերտ-զարդարական (monumental-decorative) ոճ, գործիքային արտայայտչական տարրեր, եւայլն: Իր երկարաշունչ նկարագրով յետագային Արեւմտեան երաժշտական aria-ները յիշեցնող երգատեսակ է:

Եկեղեցւոյ կողմէ տաղերուն գործածութիւնը շարականներուն նման կանոնականացուելով պարտադիր չէ դարձած: Տաղերը *գործածուած են մեծ տօներուն, որպէս երաժշտական յատկեալ երկեր շեշտելու համար օրուան հանդիսութիւնը, ինչպէս Ս. Ծնունդի Ջօրհնէքի, Տեառնընդառաջի Նախատօնակի, Սուագ Հինգշաբթիի Ոտնլուայի, Սուագ Ուրբաթի Թաղման, եւայլն:*

Աւուր պատշաճի տաղեր կ'երգուէին նաեւ Պատարագներու ընթացքին, երեք անգամ. Ա.- «Քրիստոս պատարագեալ»էն յետոյ, Բ.- «Գոհանամք զքէն Տէր»էն ետք եւ Գ.- Պատարագի վերջաւորութեան՝ մասի բաշխման առեն:

Սակայն, 18-րդ դարուն, Սիմէոն Ա. Երեւանցի Կաթողիկոսի յօրինած «Տէր ողորմեա» սրտայոյզ եւ հոգեշարժ աղօթք-երգին անմիջականօրէն վայելած մեծ ժողովրդականութեան պատճառաւ՝ հրահանգուեցաւ առաջին երկու տաղերուն փոխարէն, այս անգամ պատարագիչին «Ի սուրբ, ի սուրբ, պատուական մարմնոյ...» աղօթքհրահանգէն ետք, երգել «Տէր ողորմեա»ն: Ժողովուրդը այնպիսի ջերմեռանդութեամբ կ'երգէ զայն, որ կարծէք հինգերորդ դարէն հասած ըլլար մեզի: Այսպիսի հոգեհարազատ աղօթերգ մը եղած է ան առաջին իսկ օրէն:

Կարգ մը շրջաններ տակաւին կը պահեն Պատարագի առաջին տաղ երգելու հին սովորութիւնը: Այժմ, սակայն, եկեղեցիներուն մեծամասնութիւնը տաղի փոխարէն կ'երգէ Հայրապետական Օրհներգը կամ օրուան գլխաւոր շարականներէն մին, եւ կամ ալ ոչինչ:

Որպէս օրինակ կը ներկայացնեմ երկու ձեռագիր խազագրուած տաղերու նմոյշներ, մին կրօնական՝ Ներսէս Շնորհալիի տաղերէն, միւսը աշխարհիկ՝ Գրիգոր Աղթամարցիի տաղերէն:

Տես էջ 134, Նկար 18՝ Տաղ խոսրովային

Տես էջ 135, Նկար 19՝ տաղ սիրոյ

(Տաղային երգարուեստի մասին մանրամասն եւ խորունկ ծանօթութեանց համար կարդալ Երաժշտագէտ Սիեր Նավոյեանի «Տաղերի ժանրի ծագումնաբանութիւնը Հայ Միջնադարեան Մասնագիտացուած Երգարուեստում» գիրքը, հրատարակուած՝ «Արճեշ» հրատարակչութեան կողմէ, Երեւան, 2001-ին, ուր հեղինակը սպառիչ կերպով ուսումնասիրած եւ լաւագէտ տրամաբանուած եւ դասաւորուած մտքերով, ինչպէս նաեւ խորացած վերլուծումներով ներկայացուցած է իր գիւրը:)

20- **Ստեղի**

Ստեղիները *Հայ Եկեղեցւոյ երաժշտութեան ութձայնի համակարգէն դուրս գտնուող ինքնուրոյն եւ բազմաճիւղ ձայնային (modal) հիմքով երկու մեղեդային տիպեր են, որոնց գլխաւոր ձայները խարսխուած են ութձայնի համակարգին երկրորդ կողմ (ՔԿ) եւ չորրորդ կողմ (ԴԿ) ձայներուն վրայ:*

Որպէս առանձնայատուկ ձայներ Հայ Եկեղեցին ութ ձայներուն հետ իւրացուցած է զանոնք իբր լրացուցիչ ձայներ: Այն երգերը, որոնք կառուցուած են ստեղիներու հիմքով՝ կոչուած են համաձայն իրենց ընտրած խարիսխներուն՝ ՔԿ կամ ԴԿ **ստեղի**ներ:

Ի դէպ ըսեմ որ, ՔԿ **ստեղի**ները *ԴԿ* **ստեղի**ներէն *քառեակ մը վեր հնչող տարբերակներ են: Որով, երկու ձայներուն տարբերութիւնը անոնց համեմատական բարձրութեան մէջ եւս կը կայանայ:*

Ստեղի *եղանակները ունին տօնական ծանր ընթացք, զարդարուն եւ հարուստ կշռոյթներով ծորուն մեղեդիներ: Մեղեդիներ՝ յագեցած ինչնիսկ ժողովրդական նուագարանային ելեւէջային տարրերով:*

21- «Յովհաննէս Թլկուրանցի, Տաղեր», էջ 11:

22- «Պատմութիւն Հայ Ձայնագրութեան...», Արիստակէս Քհնյ. Հիսարլեան, էջ 22:

23- «Հ. Մինաս Բժշկեան, ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ...», Սրամ Քերովբեան, էջք 23, 24:

24- Համբարձում Լիմոնճեան, իր շրջանի ամենայայտնի երաժշտագէտը. քաջածանօթ՝ շարականագիտութեան, Յոյն Եկեղեցական երաժշտութեան, Թուրք երաժշտութեան ու Եւրոպական երաժշտութեան:

Երաժշտական գիտութեան մէջ իր ունեցած բազմահմտութեան համար արժանացած էր «Պապա» կոչումին, որ կը նշանակէր վարպետ:

(Եգիպտահայ երաժշտագէտ Հայկ Աւագեան, խմբագիրը Գահիրէի «Զահակիր» շաբաթաթերթի «Ծիծեռնակ» երաժշտագիտական հանդէսին, 2005-ի Յունուարի թիւով, 125 էջերով, վերջերս իրեն տրամադրելի դարձած երաժշտական նիւթերուն ուսումնասիրութեամբն ու անոնց հոյակապ ներկայացումովը ոչ միայն մեծապէս շահեկան, այլ՝ յոյժ կարեւոր տեղեկատուական ու արժէքաւոր աղբիւրային ծանօթութիւններով լեցուն աշխատանք մը կը հրամցնէ, առաւել լոյս սփռելով Պապա Համբարձում Լիմոնճեանի ձայնագրութեան գրութեան զանազան երեւոյթներուն վրայ:

Հայ երաժշտութեան պատմութեան Լիմոնճեանի ժամանակաշրջանով հետաքրքրուողներուն համար չափազանց օգտակար պիտի ըլլայ ընթերցումը այս գործին:)

25- Շարական (Ձեռագ), էջ 573:

26- Ձայնագրեալ Շարական (Ն. Թաշճեան), էջ 690:

27- **Դէմ բոնել**

Միաձայն կերպով երգուած կամ նուագուած երկի մը, առ հասարակ, աւելի ցածէն ընթացող շարունակական ու երկարաձգուած ձայնով կամ ձայներով ընկերակցելու ոճ է, ձայնառութեան կերպ մըն է, որ Միջին Արեւելեան ժողովուրդներու ազգային երաժշտութեան մէջ եւս կը գործածուի:

Դէմ բոնուող *ձայնահնչիւնը գլխաւորաբար ձայնին (mode) հիմնաձայնը (tonic) կ'ըլլայ. երբեմն նաեւ՝ դիմող կամ տիրապետող ձայնը:*

Դէմ բոնելու *ոճին կիրարկումը յատկապէս տուտուկահարներու եւ զուռնահարներու մօտ դարձած է զուգանուագներու անհրաժեշտ ու անբաժանելի մասը:*

Դէմ բոնելու *երկու կերպեր կան.*

ա) ողորկ ու երկարաձգուած,

բ) կտրատուած եւ կշռութային:

Դէմ բռնել *տարազը կամ արտայայտութիւնը Արեւմտահայերէն է: Ձայն կատարող երաժիշտը կը կոչուի դէմ բռնող: Արեւելահայերէնն է՝ դամ պահել:*

Դամ պահող *նուագահարը կը կոչուի դամքաշ:*

28- «Նշանաւոր Ճեմարանականներ», էջ 79, S. Ասողիկ Քհնյ. Կարապետեան:

29- Les Chants Liturgique De L'eglise Armenienne Traduits En Notes Musicales Europeennes Par Pietro Bianchini Et Publies Par La Congregation Des Pères Mekhitaristes, Venise Imprimerie Armenienne De St. Lazare, 1877.

30- «Մակար Եկմալեան» (Վաւերագրեր, նամակներ, յօդուածներ), Ալեքսանդր Դաւթեան, էջ 17:

31- «Նշանաւոր Ճեմարանականներ», էջք 248-249, Դանիէլ Երաժիշտ:

32- Կոմիտաս Վարդապետ, «Դաշնաւորեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ, Վասն Միասեռ Արական խմբի», Վերատեսեալ ի ձեռն Վարդան Սարգսեանի, հրատարակութիւն Հ. Սէմէրճեանի, Փարիզ 1933:

33- «Երգեցողութիւնք Սուրբ Պատարագի Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ, Խորէնեան Պատարագ», Նիւ Եորք, 1999:

34- Փիւէճեանի ձայնագրած մշակումները տեսնել էջ 67-167ին վրայ:

35- «Հոգեւոր Երգեր», խմբագիր Սննա Արեւշատեան, Անահիտ Հրատարակչութիւն, Շապիկի 3-րդ էջ, Երեւան, 1998:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

1- «Ակնարկ Հայ Երաժշտութեան Պատմութեան», *Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչութիւն, Երեւան, 1963:*

2- «Անծիկնք Նուիրեալք Շարականը», *Գրիգոր Փիտէճեան, Միս Հրատարակչութիւն, Նիւ Եորք, 2003:*

3- «Ապաշխարութեան Շարականներ», *Յայնագրեց Տ. Մեսիս Քհնյ. Գալստեան, Հրամանաւ Տ.Տ. Վազգէն Ա. Կաթողիկոսին Ամենայն Հայոց, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1986:*

4- «Աստուածաշունչ, Նոր Կտակարան Յիսուս Քրիստոսի», *Նոր Աշխարհաբար քարգմանութիւն համեմատութեամբ Յունարէնի եւ Գրաբարի: Հրատարակութիւն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, գործակցութեամբ Լիբանանի Ս. Գրոց Ընկերութեան, Անթիլիաս, 1996:*

5- «Աւագ Շաբաթ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ» *ըստ Կարգաւորութեան Երանելի Թարգմանչաց Մերոց եւ Այլոց Սրբոց Հարց, ի Հայրապետութեան Տ. Տ. Սկրտչի Ազգասէր եւ Վեհափառ Կաթողիկոսի Ամենայն Հայոց, ի Նոր Ջուղա, 1895:*

6- Բաբգէն Եպիսկոպոս Կիւլէսէրեան, ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻ, *Տպարան Սրբոց Յակոբեանց, Երուսաղէմ, 1930.*

7- «Գրիգոր Նարեկացի եւ Հայ Երաժշտութիւնը V-XV դդ.», *Ն. Կ. Թահմիզեան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, Երեւան, 1985:*

8- «Գրիգոր Նարեկացի Շարականագի՞ր», *Գրիգոր Փիտէճեան, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1999:*

9- «Գրքոյկ Որ Կոչի Նուագարան», *ըստ խնդրոյ յակնայ գիտէն ջերասցոց հանգուցեալ մահտեսի Փիլիպոսի որդի Մահտեսի Մինաս մեծահամբաւ Ամիրայիճ: Ի հովուապետութեան միածնաէջ Սրբոյ գահի Տեառն Ղուկասու սրբազան Կաթողիկոսի ամենից Հայոց: Եւ ի վերադիտողութեան սրբոց տնօրինականացն տեղեաց Քրիստոսի, Տեառն Պետրոսի շնորհափայլ Պատրիարքի: Ի Կոստանդինուպօլիս: Տպեալ հրամանաւ իսկ եւ ակնարկութեամբ նորին սրբազան Պատրիարքի Տեառն Զաքարիայ ազ-*

գասէր կարդացեալ աստուածաբան բարուճապետի: Արտահանեցեալ ի Կեսարացի Գապասաքալեան Գրիգոր դպրէ: Յամի ներմարմնութեան Տեառն 1794, եւ մերոյս ՌՄԽԳ, եւ Օգոստոսի 23, Կոստանդնուպօլիս:

10- «Երաժշտական Բացատրական Բառարան», *Կ.Ե. Մելիք-Վրթանէսեան, Մ.Ա. Տօնեան, "Խորհրդային Գրող Հրատարակութիւն", Երեւան, 1989:*

11- «Երգեցողութիւնք Սուրբ Պատարագի Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ "Խորէնեան Պատարագ"», *Հեղինակ՝ Խորէն Մէյիւնէճեան, Հրատարակուած՝ Ամերիկայի Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ Դպրաց Դասերու Միութեան կողմէ, Նիւ Եորք, 1999:*

12- «Երկերի ժողովածու», *Յովհաննէս Յովհաննիսեան (1864-1929), Երկեր, Երեւան, 1959:*

13- «Ծիծեռնակ» *երաժշտական յատկուած «Զահակիր» շաբաթաթերթի, Խմբագիր՝ Հայկ Աւագեան, Ե. Տարի, թիւ 1 (17), Յունուար 2005, Գահիրէ, Եգիպտոս:*

14- «Ծիսագիտութիւն», *Նորայր Արք. Պողարեան, Ս. Վարդան Մատենաշար, Հրատարկչութիւն «Թագուհի Թամսըն» Հիմնադրամի, Նիւ Եորք, 1990:*

15- «Կարգ Ոտնլուայի», *Յայնագրեց Պսակ Վրդ. Թումայեան՝ Միաբան Ուխտին Սրբոց Յակոբեանց, Տպարան Արարատ, Պուէնոս Այրէս, 1954:*

16- Կոմիտաս Վարդապետ, «Դաշնաւորեալ Երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ, Վասն Միասեռ Արական Խմբի», *վերատեսեալ ի ձեռն Վարդան Մարգսեանի, հրատարակութիւն Հ. Մէմէրճեանի, Փարիզ, 1933:*

17- «Հ. Սինաս Բժշկեան, ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ Որ Է Համառօտ Տեղեկութիւն Երաժշտական Սկզբանց Ելեւէջութեանց Եւ Նշանագրաց Խազից 1815», *Աշխատասիրութեամբ Արամ Քերովբեանի, Երեւան, 1997:*

18- «Հայ Ժողովրդական Երաժշտական Ստեղծագործութիւն», *Մարգարիտ Բրուտեան, Լոյս Հրատարակչութիւն, Երեւան, 1983:*

19- «Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Շարականներու Եղանակներու Խմբաւորում», *Աշխատասիրեց՝ Գէորգ Սրկ. Փանոյեան, Ս. Հա-*

տոր, USC Institute of Armenian Studies, Book Series No 1, Դրազարկ Հրատարակութիւն, Գալիֆորնիա, 2009:

20- «Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Շարականներու Հեղինակները V-XIV Դարեր», *Աշխատասիրեց՝ Գէորգ Սրկ. Փանոյեան, Լոս Անճելըս, 2011:*

21- «Հայ Եկեղեցւոյ Բարձրաստիճան Հոգեւորականներ, Գ. Գիրք, Մատենագիտական, Եկեղեցագիտական, Պատմագիտական», *Հեղինակ՝ Դոկտ. Զաւէն Աւ. Քինյ. Արզումանեան, Ձօնուած՝ Հայերէն Գիրքի Տպագրութեան 500-ամեակին, հրատարակութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ Ամերիկայի Արեւմտեան Թեմին, 2013:*

22- «Հայերէն Արմատական Բառարան», *Հր. Աճառեան. Հրատարակչութիւն Երեւանի Համալսարանի, Երեւան, 1971:*

23- «Հայկական Սովետական Հանրագիտարան», *Երեւան, 1985:*

24- «Հայոց Հին Գրականութեան Պատմութիւն», *Գիրք Առաջին, Ակադեմիկոս Մ. Աբեղեան, Բ. տպագրութիւն, Տպարան Սեւան, Պէյրութ, 1955:*

25- «Հասկ», *Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Պաշտօնաթերթ, Մայիս-Յուլիս 1958, Անթիլիաս, Լիբանան:*

26- «Հոգեւոր Երգեր», *խմբագրող՝ Աննա Արեւշատեան, Անահիտ Հրատարկչութիւն, Երեւան, 1998:*

27- «Ձայնագրեալ Շարական Հոգեւոր Երգոց Սուրբ եւ Ուղղափառ Առաքելական Եկեղեցւոյ Հայաստանեայց Յօրինեալ ի Սրբոց Թարգմանչաց Մերոց, եւ ի Սրբոց Հայրապետաց», *ի Վաղարշապատ, ի Տպարանի Սրբոց Կաթողիկէ Էջմիածնի, 1874-ՌՅԻԴ, Ձայնագրեց Նիկողայոս Թաշճեան:*

28- «Ձայնագրեալ Շարական Հոգեւոր Երգոց Սուրբ եւ Ուղղափառ Առաքելական Եկեղեցւոյ Հայաստանեայց», *Յօրինեալ ի Սրբոց Թարգմանչաց Մերոց եւ Հայրապետաց եւ Վարդապետաց, Ա. Հատոր, ԳԱՆՁԱՍԱՐ Աստուածաբանական Կենտրոն, Երեւան, 1997.*

29- «Ձայնեղանակների Ուսմունքը Միջնադարեան Հայաստանում», *Աննա Արեւշատեան, Հայաստանի Հանրապետութեան Գիտութիւնների Ազգա-*

յին Ակադեմիա Արուեստի Ինստիտուտ, Երեւան, Հ.Հ.Գ. Ա.Ա. «Գիտութիւն» Հրատարակչութիւն, 2013:

30- «Մակար Եկմալեան», (Վաւերագրեր, նամակներ, յուշեր, յօդուածներ), *Ալեքսանդր Գաւթեան, Ամրոց Հրատարակչութիւն, Երեւան, 2006:*

31- «ՍԱՆԲՈՒՍՈՒՄ Հոգեւոր Երաժշտութեան Պատմութեան, Տեսութեան եւ Գեղագիտութեան Հարցեր», *Միջազգային Երաժշտագիտական Տարեգիրք, Հատոր Գ.* "Բիւզանդական Ազդեցութեան Վարկածը՝ Հայ Հիմներգութեան Կարգ (Կանոն) Ժանրի Առնչութեամբ", *Մեր Նավոյեան, «Լիմուշ» Հրատարակչութիւն, Երեւան, 2009:*

32- «Յովհաննէս Թլկուրանցի, Տաղեր», *Աշխատասիրութեամբ Էմ. Պիվազեանի, Հայկական ՍՍՌ Գ.Ա Հրատարակչութիւն, Երեւան, 1960:*

33- «Ներսէս Շնորհալին Երգահան եւ Երաժիշտ», *Ն. Կ. Թահմիզեան, Հայկական ՍՍՌ Գ.Ա Հրատարակչութիւն, Երեւան, 1973:*

34- «Նկարագիր Երգոց Հայաստանեայցս Եկեղեցւոյ», *Եղիա Տճտեսեան, Կ. Պոլիս, 1874:*

35- «Նշանաւոր Ճեմարանականներ», *Գէորգեան Հոգեւոր Ճեմարան, (Աստուածաբանական Համալսարան), Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2005:*

36- ՇԱՐԱԿԱՆ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ, Յօրինուած Սուրբ Թարգմանիչներու, Սուրբ Շնորհալիի եւ այլ Սուրբ Հայրապետներու եւ Վարդապետներու Կողմէ, *Աշխարհաբարի վերածեց Եփրեմ Մրք. Թապագեան, Հրատարակութիւն՝ Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմի Առաջնորդարանին, Գալիֆորնիա, 2011:*

37- «Շարական Հոգեւոր Երգոց Սուրբ եւ Ուղղափառ Եկեղեցւոյս Հայաստանեայց», *ի Տպարանի Մրբոց Յակոբեանց, Երուսաղէմ, 1936-ՌՅՃԵ:*

38- «Ոսկեփորիկ, Հայ Երգի Գոհարներ», *Նիկողոս Ս. Թահմիզեան, Ապրիլ Հրատարակչութիւն, Լոս Անճելըս, 1994:*

39- «Պատմութիւն Հայ Ձայնագրութեան եւ Կենսագրութիւնք Երաժիշտ Ազգայնոց 1768-1909», *Արիստակէս Քհնյ. Հիսարլեան, Տպարան Մ. Յովակիմեանի, Կ. Պոլիս, 1914:*

40- Պետրոս Վաչանցի, Բանաստեղծութիւններ, *Աշխատասիրութեամբ Շուշանիկ Նազարեանի, Հայ Գրականութիւն Մատենաշար, «Մտորիրդայիհ Գրող», Երեւան, 1990:*

